

Ինչպես դիմել

Քայլ 1-ին

Լրացրեք դիմումը. [Nonimmigrant Visa Electronic Application \(DS-160\) form](#).

Քայլ 2-րդ

Վճարեք վիզայի դիմումի գումարը: Վիզայի գումարի վերաբերյալ էջը նշում է վիզայի տեսակները և համապատասխան գումարը ԱՄՆ դոլարով և տեղական տարադրամով:

Քայլ 3-րդ

Հանձնեք ձեր E տեսակի վիզայի դիմումը ըստ վերը նշված ցուցումների:

Կա E տեսակի վիզայի փաստաթղթերի հանձնման երեք տարբեր կատեգորիա.

- **Եթե սա ձեր առաջին դիմումն է E տեսակի վիզայի համար** և դուք կամ դիմում եք աշխատելու որպես նոր E վիզայի որակավորում ունեցող ձեռնարկության աշխատակից, կամ դուք ինքներդ եք ներդրողը, պետք է հանձնեք հետևյալ փաստաթղթերը. [DS-160](#) և [DS-156E](#) դիմումները, ձեր E վիզայի ավարտից հետո վերադառնալու մտադրության մասին հայտարարությունը և E վիզայի համար անհրաժեշտ փաստաթղթերի ողջ փաթեթը:
- **Եթե դուք թարմացվում եք Ձեր E տեսակի վիզան**, տրամադրեք հետևյալ փաստաթղթերը. [DS-160](#) և [DS-156E](#) դիմումները, ձեր E վիզայի ավարտից հետո վերադառնալու մտադրության մասին հայտարարությունը, նամակ ձեր գործատուից/ԱՄՆ-ի ձեռնարկությունից, որը մանրամասն տեղեկություններ է պարունակում ձեռնարկության նախկին և պլանավորված գործողությունների մասին, ապացույց առ այն, որ ձեռնարկությունը դեռ գործում է, օրինակ՝ ԱՄՆ-ում կորպորատիվ հարկերի հայտարարագրման/շահութահարկի և վնասի վերջին քաղվածքների պատճենները/հաշվեկշռի քաղվածքի/աշխատողների վերաբերյալ W-2 ձևաթղթի և/կամ աշխատավարձերի վճարման փաստաթղթերը և, միայն եթե ձեռնարկության սեփականատերերի փոփոխություն է եղել, պետք է ներկայացնել նաև նոր սեփականության վկայականները:
- **Եթե սա ձեր առաջին դիմումն է E տեսակի վիզայի համար**, սակայն դուք դիմում եք աշխատելու նախկինում E տեսակի վիզայի համար որակավորված ձեռնարկությունում, տրամադրեք հետևյալ փաստաթղթերը. [DS-160](#) և [DS-156E](#) դիմումները, ձեր E վիզայի ավարտից հետո վերադառնալու մտադրության մասին հայտարարությունը, մանրամասն ինքնակենսագրական և փաստաթղթեր ձեր մասնագիտական որակավորումների վերաբերյալ (օրինակ՝ ստացած կրթական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի պատճենները, վերապատրաստումների հավաստագրերը և/կամ նամակներ նախորդ գործատուներից), աջակցության նամակ ձեր ԱՄՆ գործատուից, որը պարունակում է պաշտոնի մանրամասն նկարագրություն, ինչպես նաև ապացույց, որ ձեռնարկությունը դեռ աշխատում է, օրինակ՝ ԱՄՆ-ում հարկերի հայտարարագրման/շահութահարկի և վնասի վերջին քաղվածքների պատճենները/հաշվեկշռի քաղվածքի/աշխատողների վերաբերյալ W-2 ձևաթղթի և/կամ աշխատավարձերի վճարման փաստաթղթերը և, միայն եթե ձեռնարկության սեփականատերերի փոփոխություն է եղել, պետք է ներկայացնել նաև նոր սեփականության վկայականները:

Գործի զննումը սկսվում է ամբողջական դիմումը ստանալուց հետո: Ոչ լիարժեք դիմումները կծգծգեն գործընթացը: Եթե ձեր գործի համար հավելյալ փաստաթղթեր անհրաժեշտ լինեն, մենք էլ փոստով կկապվենք ձեր կամ ձեր փաստաբանի հետ:

4-րդ քայլ

Հարցազրույցի ժամ վերցնելը. Ձեր E տեսակի վիզայի համար անհրաժեշտ փաստաթղթերը զննելուց հետո (նախնական զննության ժամկետը տարբերվում է՝ ելնելով գործի տեսակից, սակայն սովորաբար տևում է 2-4 շաբաթ) դուք կստանաք նամակ էլ. փոստով, որով կտեղեկացվեք, որ կարող եք առցանց հարցազրույցի օր և ժամ վերցնել:

Կարևոր նշում. Ձեր հարցազրույցի համար օր և ժամ վերցնելու նպատակով մտեք ձեր դիմումի էջ և սեղմեք «շարունակել» կոճակը:

5-րդ քայլ

Այցելեք հյուպատոսություն ձեր հարցազրույցի օրը՝ համապատասխան ժամին:

Գործի պաշտոնական դիտարկումը սկսվում է դիմումատու(ներ)ի հետ անձնական հարցազրույցով: Եթե հարցազրույցից հետո անհրաժեշտ կլինեն հավելյալ փաստաթղթեր, հյուպատոսը ձեզ հստակ ցուցումներ կտա, թե ինչ ներկայացնել և ինչպես: